




ՄԱՐԿԱԿԱՆ ԿԱՐԹՈՂԻԿՈՍԻ
ԿԱՐԹՈՂԻԿԱՆ ԿԵՆՏՐԱԼ
ԼՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱՆ

**Ն. Ս. Օ. Տ. Տ.
ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ
ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ**

Սբ Աստվածածնի Ավետման տոնի առիթով Մայր Աթոռ Սբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում համայն մեր ժողովրդին եւ շնորհավորում բոլոր տիկնանց եւ օրիորդաց՝ մայրության ու գեղեցկության օրվա կապակցությամբ:

Այս օրերին, երբ Արցախի սահմաններում սանձազերծված ռազմական գործողությունների հետեւանքով խաթարված է մեր կյանքի խաղաղությունը, մեր սբ տաճարներում առանձնակի ջերմեռանդությամբ է հնչում մեր հայրերի՝ Տիրամորն ուղղված բարեխոսական աղոթքը, որպեսզի «լռեն պատերազմները, դադարեն բռնամու հարձակումները, եւ երկրի վրա հաստատվեն սերն ու արդարությունը» (Ժաճկիք):

Դարեր ի վեր մեր մայրերի խնամքի ու սիրասուն հայացքի ներքո են դաստիարակվել ազնվասիրտ մեր զավակները՝ գիտնականն ու մանկավարժը, զինվորն ու զորականը, հոգեւորականն ու շինականը, որոնք շենացրել են մեր հայրենիքը, խաղաղ պահել մեր երկրի սահմանները եւ պաշտպանել ազատ ապրելու աստվածաշնորհ մեր իրավունքը:

Հայրենիքի առաջ ծառացած պատերազմի վտանգն այսօր առավել ուժականություն է հաղորդում քաջարի հայ զինվոր կերտելու մեր մայրերի անառքելությանը եւ նորովի բացահայտում նրանց՝ դժվարությամբ առաջ չընկրկելու խիզախությունն ու ոգին:

Միաձնաէջ սբ խորանի առջեւ աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ Տերը խաղաղություն շնորհի հայրենի մեր երկրին ու ժողովրդին եւ սբ Աստվածածնի բարեխոսությամբ երջանկություն ու քաջառողջ կյանքի արեւշատ տարիներ պարգեւի մեր մայրերին ու բույրերին:

**Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց
ԵԿՄ վարչության անդամներին**

Ապրիլի 1-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունեց Երկրապահ կամավորականների միության (ԵԿՄ) վարչության անդամներին՝ գլխավորությամբ ԵԿՄ վարչության նախագահ, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յուզիանիսյանն ու Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, ինչպես նաեւ՝ եռասերունդ երկրապահները:

Միասնական՝ Տերունական աղոթքից հետո խոսք ասաց ԵԿՄ նախագահ Մանվել Գրիգորյանը՝ ներկայացնելով ԵԿՄ առաքելությունն ու գործունեությունը, ՀՀ անկախության 25-ամյակին ընդառաջ իրականացվող ծրագրերը: ԵԿՄ նախագահն առանձնահատուկ կերպով ընդգծեց Մայր Աթոռի եւ միության միջեւ ձեւավորված գործակցության կարեւորությունը՝ հատկապես երիտասարդ սերունդին հայրենասիրական ոգով կրթելու գործում:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական օրհնությունն ու գնահատանքը բերեց միության անդամներին:

Ընդգծելով Արցախի պաշտպանության գործում երկրապահների ունեցած կարեւոր ծառայությունը՝ Նորին Սրբությունը նշեց, որ երկրապահների այդ հաղթական ոգին ու գիտակցությունը նաեւ ԵԿՄ աշխատանքի ու ջանքերի շնորհիվ շարունակելու են ապրել սերնդեսերունդ:



Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավոր ուրախություն հայտնեց, որ այսօր երկրապահները շարունակում են իրենց առաքելությունն իրականացնել կարեւորագույն մի ոլորտում՝ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության, հայրենիքի արժանավոր գավակը լինելու գիտակցության կերտման գործում: Այս կապակցությամբ Հայոց Հայրապետը գոհունակություն հայտնեց Եկեղեցու ու ԵԿՄ-ի միջեւ առկա սերտ գործակցության համար՝ ավելացնելով, որ Հայ Եկեղեցին կշարունակի զորակցություն բերել նրանց ծրագրերին ու իրականացվող գործունեությանը:

Նորին Սրբությունն աղոթքով վերհիշեց բոլոր այն հայորդիներին, ովքեր հայրենիքի պաշտպանության սուրբ գործի համար իրենց կյանքերն են ընծայաբերել՝ նշելով, որ նրանց շնորհիվ են կերտվել հայ ժողովրդի հաղթանակները: Հայոց Հայրապետը հավելեց, որ այսօր այդ քաջերի նահատակության ոգին է խաղաղ պահում հայրենիքի սահմանները:

Վերջում Գարեգին Բ Վեհափառը վստահություն հայտնեց, որ Աստծու օրհնությամբ հայ ժողովուրդը ինչպես անցյալում, այնպես էլ այսօր կկարողանա իր քաջարի զավակների ծառայության ու նվիրումի արդյունքում ապրել խաղաղության մեջ՝ կառուցելով իր բարօր ու առաջընթաց կյանքը:

**Հանրապետական մաղթանք՝
Հայոց աշխարհի խաղաղության եւ անսասանության համար**



Ապրիլի 3-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հանրապետական մաղթանք՝ Հայոց աշխարհի ապահովության եւ անսասանության համար: Մայր տաճարում մատուցված ս. Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքն ուղղեց ներկա հավատավոր ժողովրդին՝ անդրադառնալով Ադրբեջանի զինված ուժերի կողմից սանձազերծված ռազմական գործողություններին:

«Աղոթքի ենք կանգնած այսօր բոլորս, սակայն խոռվված է ազգի յուրաքանչյուր զավակի հոգին, որովհետեւ, ինչպես տեղեկացանք, երեկ գիշեր ազգիս զավակունք վերստին հարկադրված եղան իրենց կյանքով պաշտպանելու մեր Հայրենիքի սահմանները:

Սարտական գործողություններն այսօր եւս շարունակվում են: Մեր զինվորները քաջաբար, արիասիրտ կերպով պաշտպանում են մեր սահմանները:

Հավատում ենք, որ մեր ժողովրդի զավակունք՝ ազգս հայոց, իր հոգու խռովքն ու ընդվզումը պիտի վերածի ակունքի նոր ուժականության, արիության ոգու եւ արժանի հարված տա հակառակորդին՝ վերահաստատելով մեր սահմանների խաղաղությունը:

Մենք Հայրության լուսապայծառ օրեր ենք ապրում, մեր կյանքը լուսավորված է հարության հավատքով: Այս ոգով մենք հաղթահարել ենք մեր կյանքի բոլոր փորձությունները, մղել ենք մեր կյանքի, պատմության բոլոր ճակատամարտերը, եւ Աստված հաղթություն է պարգեւել մեր ժողովրդի խաղաղությունը եւ մեր ժողովրդի ազատ կյանքը:

դին, շնորհ տվել կերտելու իր պետականությունը եւ գործունեություն՝ պաշտպանելու իր ազատ կյանքը: Մենք հավատում ենք, որ այս ևույն ոգով՝ միաբան ու միասնական, հարության հաղթական հավատքով մեր ժողովուրդը պիտի շարունակի կերտել իր խաղաղ կյանքը, շենացնել իր երկիրը, անվտանգ ու ապահով պահպանել երկրի սահմանները»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունը հորդորեց ժողովրդին հանձնառության ոգով գոտեպնդել երկրի սահմանների վրա իրենց նվիրական պարտքը կատարող հայորդիներին, որպեսզի նրանք Նույն արիությամբ շարունակեն իրենց սրբազան ծառայությունը՝ ի սեր հայրենիքի եւ ի սեր ժողովրդի:

Վեհափառ Հայրապետը նաեւ հրավիրեց ամենքին աղոթք բարձրացնելու առ Աստված՝ հայրենիքի գործության ու խաղաղության, ինչպես նաեւ հայոց զոհված զավակների եւ վիրավորների համար:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տերն Իր ամենագոր Աջը հովանի դարձնի Հայաստանի եւ Արցախի վրա եւ անխռով պահելով ժողովրդի կյանքը՝ համայն հայությանը մշտապես առաջնորդի հաղթության ուղիով:

Արարողության ընթացքում՝ սուրբգրային ընթերցումներից հետո, Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը ծնրադիր ընթերցեց «Գոհանամք զքեւ» աղոթքը՝ հայցելով Աստծուց անսասանություն, պայծառություն ու բարօրություն Հայոց աշխարհին եւ երկնառաջ օրհնություն՝ համայն հայոց ազգին:

Հանրապետական մաղթանքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթեց մարտական գործողությունների ժամանակ զոհված հայորդիների հոգիների հանգստության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը Արցախում

Ապրիլի 13-ին Ն. Ս. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ն. Ս. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը մեկնեցին Արցախ՝ իրենց զորակցութիւնը բերելու ԼՂՀ իշխանութիւններին, արցախահայությանը եւ հայրենայաց պաշտպան զինվորներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին ուղեկցում էին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս հաջատրյանը, Ռումիկայի հայոց թեմի առաջնորդ Տաթև եպս Մուրադյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Զովնան եպս Հակոբյանը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության միջեկեղեցական բաժնի վարիչ Զուսիկ Ճ. վրդ. Մարտիրոսյանը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության լսատեսողական բաժնի վարիչ Պետրոս վրդ. Մանուկեանը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի գաղազանակիր Աղան արքեպ երնջակյանը, Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրէն Վահրամ քնն. Մելիքյանը,



իրապարակախոս Զորի Բալայանը եւ Հայ Եկեղեցու բարերար Գաբրիէլ Զեմբերյանը:

Գարեգին Բ Հայրապետին եւ Արամ Ա Կաթողիկոսին օղակապակայանում դիմավորեցին Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը, ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը, ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուկասը, ԼՂՀ արդարադատության նախարար Արարատ Ղանիեյանը, ԼՂՀ մշակույթի նախարար Նարինե Աղաբալյանը, թեմի հոգեւորականներն ու բանակի հոգեւոր սպասավորները:

Ժամանելուց հետո տեղի ունեցավ Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսների հանդիպումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հետ:

Ապրիլի 13-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը՝ ուղեկցությամբ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանի եւ ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուկասի, այցելեցին Քանձասարի վանք:

Շարունակությունը՝ էջ 4

Միասնական աղոթք՝ հայրենի եւ արցախահայության զինվորների համար



Ապրիլի 4-ին Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում, նախագահությամբ Ն. Ս. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, հայրենիքի եւ հայրենայաց պաշտպան զինվորների համար կատարվեց միասնական աղոթք:

Արարողությանը ներկա էր Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Աղոթքին մասնակցում էին նաեւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու թեմակալ առաջնորդները, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառույցներում պաշտոնավարող եպիսկոպոսներն ու միաբանները, հազարավոր հավատավոր հայորդիներ:

Եկեղեցականների թափուրը, որի մեջ էին ընդգրկված նաեւ զինվորականներ, տաճարի մուտքից, «Հրաշափառ» շարականի երգեցողության ներքո, Ամենայն Հայոց Հայրապետին առաջնորդեց դեպի խորան: Այդ ընթացքում ներկա ժողովուրդը ծափող-ջուլններով դիմավորեց հայրապետական թափուրին մասնակից հայրենայաց պաշտպաններին:

Այնուհետեւ կատարվեց մաղթանք Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անսասանության եւ խաղաղության համար, որի ընթացքում Նորին Սրբությունը ծնրադիր աղոթեց՝ հայցելով Երկնավորից. «Եւ արդ՝ մեք ամենեքեան խոնարհեալ անկանիւք առաջի Զո եւ հայցեմք յամենառատ ողորմութենէր Զումմէ, Տեր Աստուած մեր, զի պահեսցես եւ պահպանեսցես զՀանրապետութիւնք Հայաստան եւ Արցախ աշխարհաց ի խաղաղութեան, ի բարօրութեան եւ յանսասանութեան...»:

Հոգեւոր դասը նաեւ առ Աստված աղոթք բարձրացրեց մարտերում եւ սահմանա-

մերձ բնակավայրերում զոհվածների հոգիների հանգստության համար:

Վերջում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքն ուղղեց արարողությանը մասնակից ժողովրդին:

**Ն. Ս. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԽՈՍ-ԸՔ ՀԱՅՐԵՆԻ-ԸՔ ԵՎ
ՀԱՅՐԵՆՅԱՆ ՊԼԵՏՊԸՆ
ՋԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՂՈՐ-ԸՔ
ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՊԻԹՈՎ**

Մեծարգո նախագահ Հայաստանի Հանրապետության,

Սիրելի հավատավոր ժողովուրդ,

Այսօր համախմբվել ենք միասնաբար աղոթք բարձրացնելու մեր երկրի ու մեր ժողովրդի խաղաղ ու ապահով կյանքի, հայրենայաց սահմանները պաշտպանող հայոց բանակի հրամանատարների եւ զինվորների անվտանգ ու հաղթական ծառայության համար:

Աղոթեցանի կողմից այս օրերին սանձազերծված ռազմական գործողություններին մեր բանակի բաջարի զինվորները դիմակայեցին անձնուրաց կերպով՝ ծանր մարտերում ետ մղելով հակառակորդին եւ պատճառելով զգալի կորուստներ: Մեր ողջ ժողովուրդը հայրենասիրության ու ազգասիրության զորեղ զգացումով ինքնաբերական զորաշարժ սկսեց: Կամավորական խմբերը ելան մեր բանակի արհեստի զինվորների հետ վճռականորեն եւ ամենայն հանձնառությամբ պաշտպանելու հայրենի երկիրն ու սրբությունները, ազատ կյանքի արդար իրավունքը Արցախի մեր ժողովրդի: Թեպետ իրավիճակը Արցախի սահ-

մաններում մնում է լարված, բայց հայրենայաց պաշտպան մեր զավակները շարունակում են արժանի հակահարված տալ հակառակորդին: Այսօր բաջարեւ են մեր հոգիները՝ տեսնելով մեր բանակի մարտունակությունը, ազգիս զավակների ազնվասիրտ նվիրումն ու խիզախությունը:

Աղոթեցանի կողմից հրադադարի անընդմեջ խախտումները, դիվերսիոն գործողությունները, սահմանամերձ բնակավայրերի պարբերական գնդակոծությունները, որոնց հավելվեց եւ այս օրերի ոճրագործությունը, վկայում են փաստում են, որ Աղոթեցանը ցանկանում է դարաբաղյան խնդիրը լուծել ռազմական ճանապարհով: Թշնամու սանձազերծած պատերազմական գործողությունների հիմնական զսպիչ ուժը, արդարեւ, մեր բանակի հզոր պաշտպանությունն է, նաեւ միջազգային հանրության արդար եւ օբյեկտիվ գնահատականը Աղոթեցանի ռազմատենչ, անընդունելի եւ դատապարտելի վարքագծին, որը մեր ժողովրդի իրավացի սպասումն է:

Մենք քրիստոնյա ժողովուրդ ենք, հետեւորդը՝ աստվածապատվեր խաղաղության ու համերաշխության, նախանձախնդիր՝ աստվածաշնորհի ազատու-



թյան: Հայրենիքի խաղաղությունը, ազգի ազատ կյանքի պաշտպանությունը սրբազան առաքելություն են մեզ համար: Մեր ժողովուրդը, որ իր պատմության ընթացքում օրհասական վտանգների դեմ համախումբ, իր հավատքի ուժով եւ ոգու արիությամբ բազում հաղթանակներ է կերտել, այսօր եւս նույն հանձնառությամբ հերոսաբար կանգնած է ընդդեմ վայրագությունների ու բռնությունների, ընդդեմ պարտադրված պատերազմի՝ վերահաստատելու համար խաղաղությունը: Առա-

քելական մեր Սուրբ Եկեղեցու հոգեւորականները նույնպես մարտնչող մեր զինվորների կողքին են՝ հավատքով զորացնելով ու բաջարեւելով մեր հայրենայաց պաշտպաններին եւ աղոթելով, որ միշտ հաղթական լինի բազուկը հայ զինվորի:

Մեր աղոթքը, օրհնությունը եւ զորակցությունն ենք բերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ ՀՀ իշխանություններին, մեր բաջարի հրամանատարներին ու զինվորներին, որ նախանձախնդիր ջանքեր են ներդնում հայրենի մեր երկրի ապահովությունն ու անվտանգությունը պահպանելու, հայրենիքը պաշտպանելու, խաղաղությունը վերահաստատելու համար:

Աղոթք ենք բարձրացնում մարտերում եւ սահմանամերձ բնակավայրերում զոհված մեր ժողովրդի զավակների՝ զինվորների եւ խաղաղ բնակիչների հոգիների հանգստության եւ երկնային լուսեղեն օթեաններում բնակության համար՝ Մեր վշտակցությունը բերելով զոհվածների ընտանիքներին եւ հարազատներին: Աղոթում ենք վիրավորների շուտափույթ ապաքինման համար:

Աղոթք ենք վերառաքում առ Աստված աշխարհի եւ մեր հայրենիքի խաղաղության համար՝ հայցելով, որ մեր ժողովուրդը հավատքով եւ արի ոգով հաղթահարի նաեւ այս դժվարություններն ու մարտահրավերները՝ շարունակելով հզորացնել մեր հայրենիքը, շենացնել ազգային մեր կյանքը ի սփյուռս աշխարհի:

Թող Տիրոջ ամենազոր սուրբ Աջն ամենայն ժամ զորակից ու պահպան լինի մեր

ժողովրդին, հայրենայաց պաշտպան մեր խիզախ զինվորներին: Հավետ կեցցեն մեր բաջ զինվորները, փառք ու պատիվ հայոց բանակին:

Ամենազոր Աստված եւ Թագավոր հավիտենից, անսասան եւ անպարտելի պահիր Զո ժողովրդին եւ հայոց աշխարհը:

Կյանքի արքայուր, խաղաղության պարգեւի եւ Զո ծառաների գորացուցիչ, խաղաղ կյանք պարգեւիր հայրենի մեր երկրին եւ զորացրու թշնամիների դեմ պատերազմում ի փառս Զո Սուրբ անվան:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ

Այգիքը՝ էջ 2

Վանքի մուտքի մոտ Կաթողիկոսներին ողջունեցին բազում հայորդիներ՝ զինվորականներ, պատանիներ եւ տարեցներ: Թեմի եկեղեցականներից եւ ՀՀ ՉՈՒ հոգեւոր սպասավորներից կազմված թափփուն Ամենայն Հայոց Հայրապետին եւ Կիլիկիո Կաթողիկոսին վանքի զանգերի հաղթական դղողանքների ուղեկցությամբ, «Հրաշափառ» ներքո առաջնորդեց Սբ Հովհաննես Մկրտիչ տաճար, ուր կատարվեց միասնական աղոթք՝ Արցախ աշխարհի

Ա-ի հետ եկել ենք նվիրական այս եկեղեցու կամարների ներքո ձեզ հետ միասին աղոթք բարձրացնելու Արցախ աշխարհի խաղաղ կյանքի համար: Եկել ենք աղոթելու մեր զինվորների անվտանգ ու ապահով ծառայության համար: Եկել ենք զորակցություն բերելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանություններին, ողջ արցախահայ մեր ժողովրդին՝ Արցախի խաղաղ, լուսավոր կյանքը կերտելու իրենց ջանքերով: Եկել ենք գոտեպնդելու Արցախի մեր ժողովրդին, գոտեպն

նապարհով լուծելու նենգ ծրագիրը: Հակառակորդի մարտական գեները՝ որքան էլ ժամանակակից, անկարող եղան հաղթանակ ապահովելու: Ավետարանական պատուհի նմանությամբ՝ յոթամուսնու զորքերը հողմերի պես բախվեցին ազատության եւ անկախության ապամաժի վրա հաստատված Արցախին: Հակառակորդի դեմ ելավ անկախության սերունդը, ելավ՝ հավատքով խրոխտ պաշտպանելու իր հայրերի քաջագործությամբ կերտված ազատությունն Արցախի: Նրանց մեջ ոգին էր ի-

տեսավ, որ արդար է հայրենյաց մեր հերոս պաշտպանների գործը: Եվ էր զորությունը՝ հեղեց Աստված Արցախ աշխարհի վրա, էր զորությունը պարգևեց՝ ետ շարժելու յոթամուսնու: Հակառակորդը թողեց ավերված շինություններ, անմեղ զոհեր, այդ թվում՝ երեխա ու կանայք, սպանված ու վայրագորեն խոշտանգված ծերեր, անդամահատված հայ զինվորների մարմիններ: Այդ ոճրագործություններն աղոթեցանական կողմը հպարտությամբ ցուցադրում եւ տարածում էր համացանցով՝ ներկա-



խաղաղության համար:

Աղոթքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի այցն Արցախ ողջունեց թեմակալ առաջնորդ Պարգեւ սրբազանը: «Այսօր Գանձասարի վանքը, Արցախ

դելով՝ նաեւ գոտեպնդելու արցախահայության անկտրում կամքով եւ քաջարի ոգով մեր զինվորների: Փա՛ռք քեզ, արցախահայություն, փա՛ռք քեզ, Հայոց բանակ: Հպարտ ենք ձեզնով, ձեր սխրանքներով, ձեր խիզախ պահվածքով:



րենց հայրերի, նրանց մեջ ոգին էր Ամարայրի ու Սարդարապատի: Նրանք «կորիճներ եղան պատերազմի մեջ, - ըստ առաքելական խոսքի, - եւ հաղթեցին...» (Եբր. 11. 34), բանգի «ամեն ոք, որ Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին» (Ա

յացնելով որպես քաջագործություն՝ ցրելու վայն իր զինվորների, իր բնակչությանը պահելու ռազմատենչության ու հայատյացության մեջ՝ սրբելով իր պարտության իրողությունը: Արցախի սահմաններից հայրենասիրու-



աշխարհը ցնծության մեջ եւ. Հայոց հայրապետներն օրհասական պահին եկել են Արցախի այս պատմական վանքը՝ գոտեպնդելու ժողովրդին, Արցախի իշխանություններին, հայ զինվորներին ու հայ հոգեւորականներին, որպեսզի մենք ամենքս գոտեպնդված կարողանանք մեր առաքելությունը շարունակել: Հենց այս օրհասական պահին մենք վկա ենք պատմական այն իրողության, երբ մեր Հայրապետները մեր կողքին են, մեզ հետ են՝ գորակցելու մեզ Աստծով, - նշեց սրբազան հայրն իր խոսքում:

Այնուհետեւ ներկաներին եւ ողջ արցախահայությանն իր գորակցության պատգամ ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ասելով.

«Միտելի՛ հավատավոր զավակներ Մեր, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լույսն ու օհնությունը, հայրապետական Մեր սերն ու աղոթքը եւ աշխարհասփյուռ ձեր եղբայրների ու քույրերի գորակցությունն ենք բերում ձեզ: Այսօր Մեր սիրելի հոգեւոր եղբոր՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ

Գոհություն Աստծո, Հայոց բանակի արհասիրտ զինվորները հերոսաբար դիմակայեցին Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողություններին: Խափանեցին դարաբաղյան հարցը ռազմական ճա-



Հովհ. 5. 4): Քաջաբար կանգնած ընդդեմ մահու՝ նրանցից ոմանք ընկան մարտերում: Արյան վկայությունը Մեր զավակների բարձրացավ առ Աստված: Եվ տեսավ Բարձրալը, որ անմեղ է քաջերի արյունը,

յություն ու ազգանվիրումը ալիքվեցին ու տարածվեցին եւ համայնքեցին ի սփյուռս աշխարհի Մեր զավակներին, որոնք դարձան բռնուցք, որպեսզի ամուր պահեն սահմաններն Արցախ աշխարհի: Բազում հայորդիներ կամավոր մեկնեցին Արցախ, եւ այսօր էլ նորերն են համալրում շարքերը հայոց բանակի՝ զորակցելու Հայրենիքի պաշտպանության սուրբ գործին: Մեր Սբ Եկեղեցու հոգեւորականները եւս աղոթքով, խաղով ու Ավետարանով օրհնում ու քաջալերում են հայրենյաց պաշտպաններին, որպեսզի մեր մարտիկները հոգով գորանան, միշտ արիասիրտ մնան՝ ընդդեմ հակառակորդի ռազմական արկածախնդրության:

Միտելի՛ ժողովուրդ հայոց, հայրենյաց սահմանին իրավիճակը դեռ մնում է լարված: Մշտապատրաստ լինեք զսպելու մեր դեմ ամեն ոտնձգություն եւ կանխելու ծրագրվող ամեն ոճրագործություն: Հայրենիքի սահմանների պաշտպանության պայքարի հետ մենք պիտի շարունակենք ավելիով ջանքեր բերել միջազգային



Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը Արցախում

տեղեկատվական և քաղաքական հարթակներում: Արցախյան իրադարձությունների մասին ի լուր աշխարհի բարձրաձայնումը կարելի է ինչպես միջազգային հանրության կողմից դարաբաղյան հիմնականորեն կարգավորման, այնպես էլ՝ Ադրբեյջանին հովանավորող ցեղասպան թուրքալիկ ապակայունացնող քաղաքականության զսպման և տարածաշրջանում խաղաղության պահպանման համար: Հավատում ենք, սիրելիներ, առաջադեմ աշխարհը, որ ջատագով է մարդու իրավունքների պաշտպանության, ահաբեկչության դեմ պայքարի, մարդկության դեմ գործվող ոճիրների կանխարգելման,

րենց սրտերի տրտմությունը: Հայցենք, որ խաղաղություն լինի հայրենի մեր երկրում և համայն մարդկության կյանքում:

Աստված, Փրկիչ մեր, պահիր և պահպանիր Ըեզ ապավինած և հուսացած Ըն ժողովրդին, շնորհիր սեր, հաստատություն և ըղձալի խաղաղություն Ըն սուրբ և պատվական հաջի հովանու ներքո այսօր և հավիտյան. ամեն:

Այս առիթով խոսք ասաց Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը՝ իր հերթին զորակցություն հայտնելով Արցախի ժողովրդին ու հայոց բանակին և կոչ ուղղելով հայությանը՝ մեկտեղելու ուժերը՝ ի պաշտպանություն Արցախի խաղաղ



այս ուժը պիտի օգտագործի՝ զորակցելու Արցախի մեր ժողովրդին և պաշտպանելու մեր նահատակների արյունով սրբագործված հողը»,- շեշտեց Նորին Սրբությունը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն այցելեցին վանքի տարածքում գտնվող Մ. Մաշտոցի անվան մատենադարան - «Գանձասար» գիտամշակութային կենտրոն, ուր ծանոթացան Արցախի տարբեր գրչատներում ստեղծված ձեռագիր մատյանների, Արցախի, մասնավորապես՝ Գանձասարի պատմությունն արտացոլող հազվագյուտ արխիվային փաստաթղթերի և հնատիպ գրքերի ցուցադրությանը:

Ծրայցից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն ունկնդրեցին Վանք գյուղի դպրոցի սաների և զինվորների կատարած հայրենասիրական երգերն ու ասմունքը, ապա օրհնելով ներկա երիտասարդներին՝ նրանց ընծայեցին խաչեր:

Ապա, ուղեկցությամբ ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուկասի, այցելեցին Ստեփանակերտի կենտրոնական զինվորական հոսպիտալ:

Հոսպիտալի պետ Չորի Սաղյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին ներկա-

յացրեց Ադրբեյջանի սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով վիրավորված ՊԲ զինծառայողների առողջական վիճակը և նրանց բուժման ընթացքը:

Այնուհետև Հայոց Հայրապետները հոսպիտալի բժշկական կազմի ուղեկցությամբ այցելեցին հիվանդասենյակներ՝ վիրավոր զինվորներին բերելով իրենց օրհնությունն ու քաջալերանքի խոսքերը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն իրենց գնահատանքը հայտնեցին հոսպիտալի բուժանձնակազմին՝ ցուցաբերած նվիրումի և հոգատարության համար, իսկ արիասիրտ հայորդիներին մաղթեցին շուտափույթ ապաքինում:

Երեկոյան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հետ միասին շրջայց կատարեցին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակով, ծանոթացան վերջին շրջանում կատարված քաղաքաշինական աշխատանքներին՝ բարձր գնահատելով քաղաքի բարեկարգման ուղղված ԼՂՀ իշխանությունների ջանքերը:



պիտի աջակցի լինի դարաբաղյան հիմնականորեն խաղաղ կարգավորմանը:

Ադրբեյջան և հայցենք, սիրելի՛ հայորդիներ, որ Բարձրյալն Աստված զորակցի լինի և արդյունավորում շնորհի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման բոլոր բարի ջանքերին: Թող Տերը գործություն պարգևի մեր ժողովրդին՝ կյանքի կոչելու հզոր Հայրենիքի, անվտանգ ու բարձր կյանքի մեր տեսիլները, որի համար նահատակվեցին մեր զավակները: Ադրբեյջան մեր նահատակների հոգիների հանգստության համար, որդեկորույս ու սգացյալ մեր մայրերի համար, որ հայրենասիրության զգացումով պարուրեցին ի-

կյանքի: Արամ Ա Հայրապետը նշեց, որ առաջին անգամ է այցելում Արցախ, սակայն Արցախը միշտ եղել է իր սրտում և հոգում:

«Մենք խաղաղասեր ժողովուրդ ենք և երբեք ոտնձգություն չենք արել, սակայն երբեք չենք թողել, որ մեր թշնամիները մեր արդար իրավունքները ոտնահարեն: Թշնամին պետք է գիտենա, որ Արցախի մեր ժողովուրդն առանձին չէ, այլ ունի զորակցությունը ողջ հայ ժողովրդի: Պատմությունը մեզ սովորեցրել է, որ ճակատագրական պահերին միասնական ուժը մեր մեծագույն զենքն է, հետևաբար այսօր ևս ողջ հայ ժողովուրդը միասնական

Հանրադեմական մաղթանք՝ Արցախի խաղաղության համար

Ապրիլի 14-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, Շուշիի Ղազանցեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում կատարվեց Հանրապետական մաղթանք՝ Արցախի ապահովության և խաղաղության համար:

Արարողությանը ներկա էին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուկասը, ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը, ԱԺ պատգամավորներ, ԼՂՀ կառավարության անդամներ, ՊԲ հրամանատարական կազմը, զինծառայողներ, երիտասարդներ և տարեցներ:

Մաղթանքի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամը փոխանցեց ներկա բարեպաշտ արցախցիներին:

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍԲԸ
ՇՈՒՇԻ
Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ
ԵԿԵՂԵՇՈՒՄ**

«Եւ զխորհուրդն զոր խորհիք խափսսի՛ Տէր,
զի Աստուած ընդ մեզ է» (ժամագիրք):

Մեծարգո՛ նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության,

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, քաջարի՛, հաղթող ժողովուրդ,

Այսօր Արցախի օրինյալ հողում, Շուշիի Ղազանցեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում գոհաբանական աղոթք բարձրացրեցինք

առ Աստված, որ հաղթանակով պսակեց հայրենյաց պաշտպան մեր զավակների պայքարը՝ Արցախ ներխուժած թշնամու դեմ՝ խափանելով մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքին բռնանալու դավադիր խորհուրդները:

Այս դժվարին օրերին, երբ լարվածությունն ու պատերազմի սպառնալիքը դեռ չեն փարատվել, Մենք մեր հոգեւոր եղբոր՝ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ ցանկացանք այցելել Արցախի մեր ժողովրդին, հայրապետական Մեր օրհնությունը և գնահատանքը բերել ձեզ, որ առ Աստված հավատքով ու արի ոգով հաստատուն կանգնած եք հայրենի հողին, անձնվիրաբար պաշտպանում եք հայրենիքի սահմանները: Արդարեւ, չկա ավելի մեծ շնորհ ու մխիթարություն Հայրապետիս համար, քան լինել հարազատ ժողովրդի կողքին իր պայքարի այս նվիրական պահին, քաջալերել նրան իր հավատարմությունը պահելու



հայրենիքին, քրիստոնեական իր հոգուն, ազգի իղձերին ու լուսավոր գալիքի տեսիլքին: Ազգը գոյություն ունի այնքան ժամանակ, քանի դեռ տեսիլք ունի և պայքարում է հանուն դրա իրագործման: Անվաճի լավագույն ապացույցն Արցախի Հանրապետությունն է, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեր ժողովրդի ազատ ապրելու դարավոր երազանքի մարմնացումը:

Մեր հոգին լի է արդար հպարտությանմբ, քանզի մեր բանակի սահմանապահ միավորումները, ինչպես և Արցախի մեր ժողովուրդը, աներկյուղ դիմակա-

յեցին ադրբեյջանական զորքերի հարձակմանը, ետ մղեցին սպառազինության գերազանցող հակառակորդին, որի մեջքին անսքող կանգնած է ցեղասպան թուրքալիկ: Առաջին իսկ օրից դրսևորվեցին մեր բանակի մարտունակությունն ու քաջարի ոգին, մեր զինվոր զավակները ցուցաբերեցին հերոսության քաջառիկ օրինակներ: Նրանցից ոմանք իրենց ծաղկուն կյանքը, պայծառ երազները նվիրեցին հայրենիքին, մեզ՝ ապրողներին, գալիք սերունդներին:

Շարունակությունը՝ էջ 6

Տայ միջնադարյան քնարերգության մի բաժին են կազմում ժողովրդական երգերը, որոնք, ի տարբերություն անհատական ստեղծագործությունների, ավանդվել են բանավոր եղանակով: Այդ երգերը, ինչպես նկատել է Մ. Աբեղյանը, տարածվել են գուսանների կողմից եւ ժամանակի ընթացքում կորցրել իրենց նախնական տեսքը՝ հաճախ վերածվելով տարբերակների: Մեր նպատակից դուրս է քննել ժողովրդական երգերի հեղինակների կամ կատարողների, ինչպես նաեւ գրառողների հետ կապված խնդիրները:

Մեր նպատակն է վերոհիշյալ երգերի մեջ որոնել Կտրիճ-Մանուկ կամ Թուխ Մանուկ քնարական հերոսին, տեսնել, թե ինչ կերպ է նա հանդես գալիս, ունի՞ ընդհանրություններ հայրենների քնարական հերոսի հետ: Տիպաբանական այս մոտեցումը բխում է մեր ուսումնասիրության պահանջից:

Թուխ Մանուկների մասին եղած պատկերացումների հետաքրքիր արձագանքներ կան միջնադարյան երգերի մի խմբի մեջ, որ գրի է առել խաչգուռը 17-րդ դարում: Այստեղ գրույցը սիրո եւ ամուսնության խնդրի շուրջ է՝ համեմատված դիցաբանական ըմբռնումների մնացուկներով: Տղան կտրիճ է ու թուխ, վարսերը փռված են ուսերին, աղջիկն ուզում է հանձնվել նրան եւ որպես գին պահանջում է օդեր՝ առաջադրելով դժվարին պայման. տղան աղջկան պիտի այցելի երկնքով, ո՞չ գետնով, ո՞չ էլ երկնային որեւէ եակի օգնությամբ, ո՞չ ամա, ո՞չ պարզ եւ ո՞չ էլ արեւոտ եղանակին, ո՞չ մերկ, ո՞չ բոքիկ եւ ո՞չ էլ հագուստով, ո՞չ ձիով, ո՞չ ջորիով եւ ո՞չ էլ ուղքով: Թուխ Կտրիճը, սակայն, գտնում է հնարը. որսում է «խրագառուի ձագ», փաթաթելով նրան, նստում քաջ արծվի թեւին, հասնում աղջկա տան մոտ եւ բացականցում.

Թուխ, դու ի դուրս արեկ, ի դուրս, Կրեկ կամկար ու ճմպով, Ինչ դուս ասիր՝ նա ես արի. Ինչ ես ասեմ՝ գայն բեր ի դուրս...
Յետեւում է տղայի առավել դժվարին պայմանը: Աղջիկը չի կարողանում կատարել այն, ուստի հանձնվում է. *Թուխն ալ չուներ, որ գայն բերեր, Ծով-ծով աչվին արտըքեր. Ծով-ծով աչվին արտըքեր. Կամար օնքվին թթթեցեր...*

(Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 113-114):

Միջնադարյան ժողովրդական երգերի մի շարք է պահպանվել, որտեղ նկարագրվում է աշխատավորական կենցաղը: Աշխատավոր մարդը դժբախտության կողքին ունեցել է նաեւ իր երջանիկ պահերը՝ հարսանիքը, զվարճությունը, ուրախությունը, որոնք երգվել են եւ բանավոր կերպով հետադարձվել հեռավոր սերունդներին, իսկ ավելի ուշ՝ մտել տաղարանների մեջ: Ահա մի քանի օրինակներ:

ԹՈՒԽՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ ՆԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ

Թե վար ցածացել, Կտրիճ երես, ա՛յ, Ծիճն երեսացել, Օ՛խ, իմ պարոն, էյնեկ, Ու կտրիճն գայն տեսել, ա՛յ: Խմբերը կատարվում է հարց ու պատասխանի ձևով. աղջիկներից մեկը զվարթ եւ անկաշկանդ արձագանքում է տղային:

Կտրիճ, ի՞նչ տեսար, Կտրիճ երես, ա՛յ, Որ ընկար, թայցար, ա՛յ Օ՛խ, իմ պարոն, էյնեկ, Ու դու հրճեկուն եղար, ա՛յ: (Նույն տեղում, էջ 140):
Իսկ երիտասարդ կտրիճների խումբը, ակնարկելով հմայիչ աղջկա կուրծքը, գովում է նրան գեղեցիկ խոսքերով եւ սեր խնդրում աղջիկներից: Վերջիններս տալիս են իրենց համաձայնությունը:

Մի ուրիշ երգում Թուխ գույգի պատմությունը կապված է կալ կալսելու աշխատանքային առարկայի հետ. տղից առկա է դիցաբանական պատկերացումը: Դեպքը տեղի է ունենում Մասիսի լանջին: Այնուհետեւ կալի աշխատանքին զուգորդում է կենցաղային մի ակնարկ, ըստ որի՝ պետք է հասկանալ, որ աշխատանքի արոցեսին ուղեկցում է սիրո յուրօրինակ խոստովանությունը:

...Դե թող մ՛ աղեկըն գալապան, Կտրիճ աղեկանց մանողան. Թուխ, ամ դու տուր հատ մի կալետ, Թե չե առնում պաթ մ՛ երեսեւ...
Պայմանը աղջկա հանձնվելն է. *Կամկար կոճակըն անկրթես. Թագուրն ի ծոցն հրամես: (Նույն տեղում, էջ 116):*

Ինչպես տեսնում ենք, այս հրաշալի սիրո երգերում նույնպես քնարական հերոսը դիցաբանական քաջ ու ազնիվ Մանուկ-Կտրիճն է, ով իր մեջ անձնագոհություն է մարմնավորում:



Աղջի՛կ, աղբօրդ արեւուն, Նոշքպեն պտիկ մի ջուր

տո՛ւր:

Տուրքս տաք է, չե պաղեր. Մեր սիրուն շատ մարդ է

մեռեր:

Թող խմիկը ու թող մեռիկը. Հաշուիմ, թը մարդ չե բերեր: (Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 142):

Ահա սիրո մի հայրեն, ուր «կտրիճը» գրուցում է իր «մարգարտե շարոց» յարի հետ, ասում, որ կզնա նրա հոր մոտ ու աղջկա ձեռքը կխնդրի: Աղջիկը բացատրում է, որ իր հայրը կմերժի նրան, ուստի ավելի ճիշտ է.

Շոքս չի ուկով արա, Եկ մեր դուռըն խաղ արա, Չիմ հայրս պարտական արա, Դու կանգնե՛ գինջ քուրթ հաւալա. Ես իմ հորս հետ կռուիմ, Թե՛ «գնա», պարտքիդ ճար արա: Յետո մայրը աթոռ կդնի, ու «կտրիճը» կնստի ամիրայի պես, աղջիկը դուռը կփակի. Կարիշում խալի ձգեմ, Ուկեթի տօշակն ի վրա. Բարձրիկ մի սեղան բերեմ Ու խորված կաքվուկն ի վրայ. Շուշա մի գինի բերեմ, Որ խմեք ի սիրուդ վրա: (Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, էջ 143):

Որքա՛ն ազատ ու անկաշկանդ սեր կա այս պատկերի մեջ: Մինչեւ հիմա էլ ժողովրդի մեջ կան երգեր ու խաղիկներ, որոնք նմանատիպ հայրենների տարբերակային դրսեւորումներ են:

Կուժն առա գացի աղբյուր, Աղբյուրից բերի սառ ջուր: Մարի գլխին պաղ աղբյուր, Պագ մը գուզիմ, Երգուս տուր: Յետաքրքիր է նաեւ ժողովրդի մեջ պահպանված այն սովորությունը, ըստ որի՝ աղջիկն ամուսնանալու է իրեն երագում ջուր տվող երիտասարդի հետ: Այն, ըստ իս, հին ժամանակներից է գալիս եւ կապված է Թուխ Մանուկների պաշտամունքի հետ:

Շարունակելի

Վարդան ԵՐԻՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

Թնդրակյան շարժումը եւ նրա դարազուլոյններին դասադարձող գեղարվեստական համադասկերը Նովի. Շիրազի «Թնդրակեցիները» դոնմում

Սկզբը՝ էջ 6

Եվ թե՛ Գր. Մագիստրոսի գինվորական ջոկատները նշված «թնդրադոքերը» չափերին եւ թնդրակեցիներին էլ Հայաստանից դուրս չվազեցին, շարժումը պիտի զարգանար ու վերելք ապրեր...

Իսկ շարժման ընթացքի, զարգացման ու վերելքի հետեւանքն իրականում եղել է այն, որ սպառնալիքներն ավելացել են թե՛ նյութական, թե՛ մարդկային ու բարոյական կորուստները. թե՛ վանքերն էին ավերվում, թե՛ մարդիկ էին մարմնապես ու բարոյապես կործանվում, եւ հայոց պետության համար, արտաքին թշնամիների դեմ պատերազմական ճակատներից բացի, բացվում էր նաեւ առավել վտանգավոր ներքին ճակատ, որը մարդկայնորեն ու հոգեբանական առումով առավել դժվար էր հաղթահարվում:

Թնդրակեցիներն իրենց ներգործուն բարոգույությամբ կարողանում էին վերափոխել մարդ-



Որդու՝ Միսիմի հետ

կանց բնավորությունն ու գործելակերպը՝ նրանց դարձնելով իրենց հյու՝ կամակատարները: Պատմիչների վկայությամբ՝ Վրվեռ անունով մի առաջադեմ, բարեպաշտ, պարկեշտ, աղքատասեր ու եկեղեցասեր իշխան կար, որն իր կալվածքում «ընդարձակ սահմաններով մի մենաստան էր կառուցել եւ լիության մեջ էր պա-

հում այնտեղ հավաքված ճգնափորներին», «ամեն տարի մեծ պահքին գալիս էր սրանց մոտ եւ հանդիսակից էր լինում նրանց մինչեւ շատիկ օրերը եւ ուրիշ շատ բարի գործերով օգնում էր նրանց» (տեղեկությունները՝ ըստ Ա. Լաստիվերցու Պատմության - Ա. Ա), այլակերպվեց, փոխեց իր վարքագիծն ու բնավորությունը

եւ վերածվեց իր հակադրությանը, դարձավ անառակ ու ամբարիշտ չարագործ. «Չարը սրան թակարդեց այն կանանց միջոցով, որոնք ապականագործ ախտով անխտիր պոռնկացան նրա հետ՝ չմտաբերելով արյունակցությունը...» (Լաստիվերցի Ա., Պատմություն, թրգմ.՝ Վ. Գեորգյանի, Եր., 1971. էջ 92-93), գրել է ականատես ու ժամանակակից, դիտարկվող պոետում թնդրակյան շարժման պարագլուխներին բանադրող հանձնախմբի ատենադպիր Արիստակես Լաստիվերցին: Եվ հենց այս է, որ կա՛մ «չեն նկատել» ու անտեսել են, կա՛մ «մոռացել» են միագիծ անշեղ գաղափարաբանությամբ ուսումնասիրողները: Իսկ դա չէր կարող դուրս մնալ ճշմարիտ գրողի տեսադաշտից:

Փաստորեն՝ գրեթե ամբողջ երկիրը բռնած համաժողովրդական թնդրակյան շարժումը մի ներքին դիվային ուժ էր, որը տարտղելով տկարացրեց ու ցրեց քրիստոնեական համայնք-

ները, ամայացրեց վանքերն ու մենաստանները, ամենուր շատացրեց թնդրադոքերը՝ դրանց բերած իրո՞ք աղետալի հետեւանքներով: Իսկ այդ շարժումը, զարգանալով ու ծավալվելով, ի՞նչ նորանոր աղետներ պիտի բերեր հայությանն ու Հայաստանին, այս մասին ոչ մի խոսք:

Այս հարցադրման սթափ ու ողջամիտ, կարելի է ասել՝ լավագույն պատասխանն է Նովի. Շիրազի «Թնդրակեցիները» պոեմը, որը, գեղարվեստական լինելով, ավելի գիտական է, քան խորհրդային պատմագիտության պաշտոնական կեղծ տեսակետը: Բանասերները նույնպես չեն դիմացել գայթակղությանը եւ մոռանալով կամ շրջանցելով Կնավա վանքի վանահորն ուղղված Գրիգոր Նարեկացու «Թնդր»՝ այդ հանճարի տաղերի եւ հռչակավոր Մատյանի՝ «ձեռնառն» տեսանկյունով ընթերցմամբ կասկած են հայտնել, թե նա եւս «համակերպ» է թնդրակյան շարժմանը, մինչդեռ Նովի. Շիրազը նույն Նարեկացուց բերած «Բագում ինչ աստուածային... ուրացեալ է ի նոցան» բնաբանով հակառակն է ասում:

Շարունակելի

Մամիկ ՄՈՐԿՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

